

ԱԼՔՈԼԱՄՈԼՈՒԹԻԻՆԸ



Ալքոլը աւելի աւեր կը դործէ քան ժանտախտը և պատերազմները միացած: Եթէ նկատի առնուէր ալքոլին առթած ֆեասները, ալքոլ պատրաստելու համար ամէնէն անհրաժեշտ ուտելիքներու (խաղող, բանջարեղէն, չաքար պարունակող պտուղներ ևայլն ևայլն) փճացումովը, ուղղակի ալքոլի մեղսակցութեամբ առաջ եկած և մարդկային ընկերութեան անդորրութիւնը տակնուվրայող և ներդաշնակութիւնը խանգարող մտային և ֆիզիքական հիւանդութիւններովը (ինչպէս՝ զանազան տեսակի յիմարներ, վաղաժամ մահով փճացող կեանքեր, անհանգարտ տարրեր, ռճրագործներ, ժառանգական վիժածներ), պիտի ունենայինք միլիառներու թիւ մը, որոնց քով ընդհանուր պատերազմի ընթացքին զոհուածներու թիւը ճղճիմ բան մը պիտի ըլլար...

Ալքոլը նախատիպարն է թունաւորիչներու, որոնք անհատին սկսելով, հետզհետէ կը տարածուին ընտանիքին, ցեղին, ազգին. այս հանգամանքով, ալքոլը ազգութիւններու անկումը յառաջ բերող մեծագոյն ազդակը կարելի է համարել:

Ալքոլամոլութեան սկզբնաւորութիւնը: Անմեղ և հմայիչ երեոյթով, ալքոլը՝ զանազան տեսակի ըմպելիներով մուտք կը դործէ տուներու և հանրային վայրերու և գինետուններու մէջ. զայն ըմբոշենելու փորձութեան կ'ենթարկուի մարդ հեշտութեամբ, երբ նկատի ունենանք մասուլանդ անոր անմեղութիւնը փաստարանող նախապաշարեալ համոզումները: Աւելին կայ. ժողովրդական լայն խաւերուն մէջ արմատացած կարծիքներու համաձայն, ալքոլը բուժիչ յատկութիւններով օժտուած հեղուկ մըն է: Գերազրգիւ երեակայութիւններով սնանողները, հաճոյքներուն ետէն վազող վաւաչոտները, անբնական զգայնիկները, սոսկական կեանքէն զէպի նորութիւն թեւոտողները, անհաւասարակշիռները, ուժասպառները, որ կը վխտան ներկայիս և իրենց առօրեայ պէտքերը հոգալու անկարողները զունգազունդ կը դիմեն գինոֆուլու ալքոլ-թոյնով, ընկարմացնելու համար իրենց բանականութիւնը, մէկ խօսքով, կամ իրենց խօսքով... մոռնալու համար:

Ալքոլամոլութիւնը դիւրացնող, տարածող ալիւպիկները: Ողբելց ըմպելին զինքը հիւրընկալող զոհին կը պատճառէ տեսակ մը հեշտագին, զուարթագին վիճակ: Մարդ անոր ազդեցութեամբ կ'ենթարկուի ինքնամոռացութեան, իր էութիւնը լուստնաութեան ուրախստիթ մթնոլորտի մը մէջ կը լողայ, իր երեակայութիւնը կը զրդուի հաճո-

յալի պատկերացումներու ծնունդ տալով, տրամադրութիւնը զգալապէս կը փոխուի զէպի լաւը, կեանքին երեւոյթները կը պայծառանան, անոյշ վերջիշումներու կ'ենթարկուի և սպազան կ'ընդնշմարէ երջանկութիւնով լիքն: Աւագ, սակայն, որ այս բոլորը ժամանակաւոր են. ալքոլի ազդեցութիւնը անհետանալէ վերջ, ենթական իր գիտակցութիւնը վերստանալով տեսակ մը յուսախաբութեան կ'ենթարկուի և իր նախկին հոգեկան վիճակը աստիճան մ'աւելի անդոհացուցիչ կը դառնայ, բան մը, որ շատերը կը մղէ վերստին ենթարկուելու ինքնամոռացութեան թունաւորումին: Յետոյ կայ օրինակը և հետեւողականութիւնը, որ կը պայմանաւորէ մտային վարակումը: Կայ նաև ժառանգականութիւնը, որ կը ստեղծէ ալքոլին հանգէպ որոշ տրամադրութիւն, ալքոլա-մոլներու զաւակներուն մօտ կայ նաև ճարտարարուեստ: և վաճառականութիւնը. առաջինը՝ ալքոլը այլապէս ձեւերու վերածելով և արտադրութիւնը բազմապատկելով, միւսը՝ ցանցնելով, ռամկացնելով և զիրարութիւններ ստեղծելով, ամէն ինչ կ'ընեն սպասելու մարդոց գիմադրութեան միջոցները և տարածելու համար ալքոլը. ու այս ամէնը կառավարութիւններու բարեխընամ ու քաջալերիչ թոյլտուութեամբ: Արդարեւ ողելից ըմպելիներ արտադրողները և սպառողները, օրէնքի բոլոր թոյլտուութիւնները կը վայելեն, բացառութիւն կը կազմեն Միացեալ Նահանգները, ուր օրէնքով արգիւրուած է, թէ արտադրելը, թէ վաճառելը և թէ գործածելը:

Ալքոլին պատճառած Թունախտաւորման երեւոյթները: Ալքոլը հիւանդանոցներու մահացուցակին մէկ երրորդին արտադրիչն է, յիմարներու կէտին ինքը ծնունդ կուտայ: Անոր ազդեցութեամբ յիմարներն ու զանազան տեսակի ոճրագործները մեծ քանակութեամբ կ'աւելնան, մահը մ'աւ համեմատութեամբ կը հնձէ ալքոլա-մոլներու զաւակները, ալքոլը թոքախտին գետին կը պատրաստէ և վնասեալ տեսակներու վարակումը կը գիրացնէ, կեանքի ակը կը կրծէ և կը զալկացնէ անոր բարգաւաճումը, չափահասներու թունաւորիչն ու մանուկներու սոթանիչն է:

Ալքոլի չարաղէտ ազդեցութեան ամէնէն ենթակայ մասը խմացականութիւնն է. ան ուղեղային գործարանաւորումը խանգարող ամէնէն ազդեցիկ թոյներէն է: Զօրաւոր խմացականութիւններով օժտուած դասակարգը անոր ենթարկուելու տեսակ մը մարմնջ ունի. ան կարծես ճակատագրական շարժում մը կ'ընէ զէպի կենդանային ցած մակարդակը իջնելու համար:

(Մնացեալը յաջորդով)

(Միախառն)

ԲԺ. Ն. ՏԷՅԻՐՄԷՆՃԵԱՆ